

## Հանրակրթություն [1]



### Կրթությունը

համաշխարհային տնտեսության խոշորագույն ոլորտներից է: Սա անակնկալ չէ այս տեխնոլոգիական դարաշրջանում: Կրթության դերն ավելի ու ավելի կարևոր է դառնում բնակչության բարեկեցությունը հետևողականորեն բարձրացնելուն միտված ցանկացած պետության մրցունակության համար: Հատկապես երիտասարդ սերնդի գիտելիքների և հմտությունների շարունակական թարմացումը ցանկացած հասարակության կարևոր հրամայականն է այսօր:

Ժամանակակից դպրոցական ծրագրերը ձգտում են տալ ավելին, քան ավանդական հմտությունները (կարդալ, գրել, կիրառել մաթեմատիկան)՝ իր մեջ ներառելով այնպիսի նոր կարողությունների զարգացում, ինչպիսիք են համագործակցությունն ու թվային գրագիտությունը, որոնք ուսանողներին կօգնեն 21-րդ դարում աշխատանք գտնելու և հաջողակ դառնալու հարցերում: Սակայն այն պետք է ավելի հեռուն գնա՝ չդառնալով սոսկ գիտելիքների և հմտությունների փոխանցման պարզ մեխանիզմ: Լավագույն դպրոցները կենտրոնանալու են աշակերտների մոտ այնպիսի կարողությունների և բնավորության գծերի զարգացման վրա, որոնք հնարավորություն կտան ազատ մտածել, գիտելիք կառուցել և վերակառուցել, ինքնուրույն ստեղծագործել և թիմերում համագործակցել: Սակայն իրական հաղթողները կլինեն նրանք, ովքեր կօգնեն աշակերտներին համատեղել իրենց գիտելիքները մարդկային առաքիլությունների և կայուն բարոյական արժեքների հետ:

Ի-Վի -ում մենք հետաքրքրված ենք օժանդակելու հաջող կրթական մոդելների մշակմանը՝ սկսած դպրոցից մինչև պետական քաղաքականության մակարդակ: Մենք ուրախ ենք Հայաստանի ամենաառաջադեմ կրթական նախաձեռնություններից մեկի՝ «Այբ» ավագ դպրոցի ([www.aybschool.am](http://www.aybschool.am)) [2]) կայացման մեջ մեր ներդրումն ունենալու համար: «Այբ»-ի հետ մեր աշխատանքն ընդգրկում է վերջինս կյանքի կոչելու ծրագրի մշակումից և դպրոցի շուրջ մեծ համայնքի կառուցմանը մասնակից լինելուց մինչև ավագ դպրոցի համար նորարարական բիզնես դասընթացների նախագծումը և դասավանդումը: Մեր առաջնայնություններից է ավագ դպրոցի աշակերտների շրջանակում ձեռներեցական մտածողություն զարգացնելը՝ կիրառելով

լավագույն միջազգային փորձը:

Պետական քաղաքականության մակարդակում նոր և առավել արդյունավետ դպրոցական ազգային համակարգերի փնտրտուքներն ինտենսիվանում են: Ուսուցիչների վերապատրաստումները, ուսումնական պլանները և ծրագրերը, գնահատման մեթոդները ազգային կրթության բարեփոխումների հիմնական ուղղություններն են: Գնահատման գործընթացների միջոցով ստացված տեղեկությունները չափազանց կարևոր են՝ դպրոցական համակարգերը գնահատելու և բարելավման ուղղությունները որոշելու համար: Մեզ հաճախ դիմում են նմանատիպ վերլուծություն և գնահատում իրականացնելու և փոփոխությունների օրակարգ մշակելու խնդիրներով: Լուծումները պարզ չեն, և մենք էական ներդրումներ ենք իրականացնում ոլորտի հետազոտությունների մեջ՝ մեր գիտելիքներն ավելացնելու և 21-րդ դարում ուսուցման գործընթացը ավելի խորը հասկանալու համար: Ինչպես ասում են՝ որքան բարդ է խնդիրը, այնքան այն ավելի արժեքավոր է:

Visit also:



**Source URL:** <http://ev.am/hy/modernizing%20education/executive-education>

#### Links

[1] <http://ev.am/hy/modernizing%20education/executive-education>

[2] <http://www.aybschool.am/>